



Թիգրան

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 284000
Փետրուար 24, 1972

Արժանաշնորհ
Տ. Կիւրեղ Քյանյ. Նթէնէկեան
Հովիւ Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ
Եւ Մահազան ծխական Խորհուրդի
Ռէյսին.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ստացած ենք 1972 Փետրուար 10 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ Զեր Նախազանութեամբ՝ Յունուար ՅՈՒՆ գումարուած 2եր
ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի երեք անդամոց
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու ատենապետներու
անդրների հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Կը ներփակենք Առաջնորդարանի կողմէ պատրաստուած տեղեկագրի ֆորմ
մը, յանձնարարելով որ իսկոյն լեցնէք զայն եւ վերադարձնէք:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիղ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՎԻՍԿՈՊՈՅ
Առաջնորդ

Տիարք՝ Յարութիւն Արմադանեան
Դանիէլ Միքայէլեան
Գէորգ-ծօրծ Սթիվոն